

## Փոխըմբռնման հուշագիր

### Հայաստանի Հանրապետության Մպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և Ամերիկայի միացյալ նահանգների Խաղաղության կորպուսի միջև

Համաձայն 1992թ. սեպտեմբերի 24-ին Միացյալ նահանգների և Հայաստանի Հանրապետության կառավարությունների միջև ԱՄՆ Խաղաղության կորպուսի Հայաստանում իրագործվող ծրագրերի վերաբերյալ ստորագրված համաձայնագրի Հայաստանի Հանրապետության Մպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը և Ամերիկայի միացյալ նահանգների Խաղաղության կորպուսն, իր հայաստանյան գրասենյակի միջոցով, (այսուհետ՝ Կողմեր) կնքեցին սույն հուշագիրը՝ Հայաստանում երիտասարդության զարգացման ոլորտում համատեղ աշխատելու և համագործակցելու նպատակով:

Կողմերը կնքում են սույն հուշագիրը փոխադարձ վստահության, հարգանքի և պատասխանատվության ոգով:

Գործելով իրենց համապատասխան կանոնադրություններով վերապահված լիազորությունների շրջանակներում և համաձայն համապատասխան օրենսդրությունների և կանոնակարգերի, կողմերը ստորագրում են սույն հուշագիրը և համաձայնվում են համագործակցել Հայաստանում երիտասարդության զարգացման ոլորտում հետևյալ ուղղություններով՝

1. Կողմերը համատեղ կաշխատեն Հայաստանում երիտասարդության շրջանակներում կամավորության զարգացման ուղղությամբ:
2. Կողմերը կապահովեն մարզային կենտրոնների կառավարման խորհուրդներում իրենց ներկայացուցիչների ներգրավումը և մասնակցությունը հետագա աշխատանքներին:
3. Կողմերը պատրաստակամություն են հայտնում համատեղ իրականացնել տեղեկատվական-վերլուծական, ուսումնական և խորհրդատվական գործունեություն՝ ուղղված ՀՀ մարզերում երիտասարդության առջև ծառայած բազմաբնույթ խնդիրների լուծմանը:
4. Կողմերը կաջակցեն երիտասարդական ֆորմալ և ոչ ֆորմալ խմբերին, երիտասարդության հիմնահարցերով զբաղվող շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություններին կազմակերպության ներքին կառավարման, մարդկային ռեսուրսի կառավարման, ռազմավարական պլանավորման, մասնակցային որոշումների կայացման, ինստիտուցիոնալ կարողությունների և առաջնորդության հմտությունների զարգացման հարցում:
5. Կողմերը մարզային երիտասարդության շրջանակներում կկազմակերպեն առաջնորդության, կարիերային նպաստող հմտությունների ու կարողությունների զարգացմանն ուղղված սեմինար պարապմունքներ և դասընթացներ:




6. Համագործակցության առաջնահերթ խնդիրը Կողմերը համարում են՝ մարզային երիտասարդության ներուժի ուղղորդումը Հայաստանի Հանրապետության, որպես ժողովրդավարական երկրի կայացման օժանդակմանը:
7. Կողմերը համատեղ կկազմակերպեն սոցիալական, հասարակական տարբեր հիմնախնդիրների վերաբերյալ համայնքի իրազեկության և մասնակցության աստիճանի բարձրացմանը միտված ծրագրեր՝ ապահովելով մարզային երիտասարդության առավելագույն ներգրավումը:
8. Կողմերը կանցկացնեն համատեղ միջոցառումներ՝ ցուցահանդեսներ, փառատոներ, տարաբնույթ դասընթացներ, այցեր մշակութային ու գիտակրթական հաստատություններ:
9. Կողմերը պարբերաբար կփոխանակեն տպագրված նյութեր, տեղեկատվություն, փոխադարձաբար կմասնակցեն մարզերում կազմակերպվող միջոցառումների, հանդես կգան նոր նախաձեռնություններով:

Սույն Հուշագրում նշված միջոցառումները չեն բացառում Կողմերի կողմից ձեռնարկվող համագործակցությունը խորացնող այլ միջոցառումների իրականացման հնարավորությունը:

Սույն Հուշագրի շրջանակներում կազմակերպվելիք առանձին միջոցառումների ընդհանուր և ֆինանսական պայմանները կհստակեցվեն Կողմերի միջև ստորագրվելիք արձանագրություններում: Միջոցառումների իրականացումը հնարավոր է համապատասխան ֆինանսավորման առկայության դեպքում:


Սույն Հուշագիրը ուժի մեջ կմտնի ստորագրման օրվանից և կգործի 3 (երեք) տարի: Հուշագիրը կարող է փոխվել կամ երկարաձգվել կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ: Ցանկացած կողմը կարող է ընդհատել Հուշագիրը մյուս կողմին 60 (վաթսուն) օր առաջ գրավոր կերպով նախազգուշացնելով:

Ստորագրված է Երևան քաղաքում 2014թ. հունիսի 10-ին, երկու հավասարազոր օրինակից հայերեն և անգլերեն լեզուներով:



Հայաստանի Հանրապետության  
Մպորտի և երիտասարդության  
հարցերով նախարարի տեղակալ

Արսեն Քարամյան



ԱՄՆ Խաղաղության կորպուսի  
Հայաստանյան գրասենյակի  
ծրագրային հարցերով փոխսնօրեն

Ջեյմս Բախ